# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 48**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի՝ համամասնական ընտրակարգով ընտրված նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի առաջին նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը.

1.1 Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու խմբակցությունների ստեղծման մասին
1.2 Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և համայնքի ղեկավար ընտրելու մասին
1.3 համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի մասին որոշման ընդունում
1.4 Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ

ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ

ԲԱԴԱԼՅԱՆ ԼԵՎՈՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 49**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 36 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 47-Ա որոշումը՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու հետևյալ խմբակցությունները՝

   1) «ԱԶԱՏԱԿԱՆ»

   2) «ՀԱՅՐԵՆԻՔ»

   3) «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

   4) «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»

2. Սահմանել, որ խմբակցությունները Վայք համայնքի ղեկավարին պետք է գրավոր ներկայացնեն իրենց կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները, որոնք կհրապարակվեն ավագանու առաջիկա նիստում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ

ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ

ԲԱԴԱԼՅԱՆ ԼԵՎՈՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 50**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով, <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ մասերի, հիմք ընդունելով Վայք համայնքի նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի 2021թ. դեկտեմբերի 17-ի թիվ ժՀՀ/2 արձանագրությունը՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Ստեղծել ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի՝ ավագանու երեք անդամից բաղկացած ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով/այսուհետև հանձնաժողով/:
2. Հաստատել հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը՝
   1) Ալանյան Շուշանիկ
   2) Արամյան Անուշ
   3) Հակոբյան Աստղիկ
3. Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար ընտրել **Մխիթար Կոլյայի Մաթևոսյանին**:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ

ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ

ԲԱԴԱԼՅԱՆ ԼԵՎՈՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

*17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 51**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը՝ համաձայն կից հավելվածի.
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ

ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ

ԲԱԴԱԼՅԱՆ ԼԵՎՈՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված

Համայնքի ավագանու

17.12.2021թ. թիվ 51 որոշման

ԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ

1. Նորընտիր համայնքի ղեկավարի երդման արարողության նպատակով՝ համայնքի ղեկավարի ընտրվելուց հետո երրորդ օրացուցային օրը ժամը 13:00-ին հրավիրվում է ավագանու նիստ, որը տեղի է ունենում համայնքի ավագանու նստավայրում:
2. Համայնքի ղեկավարի երդման արարողության նախապատրաստման և անցկացման կազմակերպման պատասխանատուն <<Վայքի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկն է/այսուհետև աշխատակազմ/:
3. Աշխատակազմը ժամը 12:30-ից մինչև 13:00-ն կատարում է ավագանու անդամների գրանցում:
4. Ավագանու նիստը իրավազոր է, եթե նիստին ներկա է առնվազն ավագանու 8 անդամ/օրենքով սահմանված թվաքանակի կեսից ավելին/: Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում նիստի իրավազորությունը, ապա ավագանու նիստ է գումարվում հաջորդ օրը, ժամը 11:00-ին:
5. Նիստին կարող են ներկա գտնվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչներ /համաձայնությամբ/, Վայոց Ձորի մարզպետը/համաձայնությամբ/, հրավիրված այլ անձիք:
6. Նիստը վարողը ընտրված համայնքի ղեկավարին հրավիրում է ամբիոնի մոտ. Ամբիոնին մոտենալուց հետո՝ ընտրված համայնքի ղեկավարն արտասանում է/կարդում է/ երդման տեքստը
   **Ստանձնելով Վայք համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.**
   **Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն համայնքի բնակիչների:**
   **Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին:**
7. Երդումն արտասանելուց հետո հնչում է Հայաստանի Հանրապետության օրհներգը: Համայնքի ղեկավարը ստորագրում է երդման տեքստի տակ, որը ի պահ է հանձնվում համայնքապետարանի աշխատակազմին:

8. Որից հետո համայնքի ղեկավարը զբաղեցնում է նախագահողի տեղը և շարունակում է վարել նիստը:
9. Ողջույնի/շնորհավորանքի/ խոսքով կարող են հանդես գալ հրավիրվածները, ինչպես նաև կարող են հրապարակվել ուղերձներ:
10. Ողջույնի խոսքերից և ուղերձների հրապարակումից հետո համայնքի ղեկավարը հայտարարում է նիստը փակված:

Աշխատակազմի քարտուղար Գ. Մուշկամբարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 52**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2021 թվականի դեկտեմբերի 20–ին, ժամը՝ 13:00–ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ

ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ԲԱԲԱՅԱՆ ՍԻՄՈՆ

ԲԱԴԱԼՅԱՆ ԼԵՎՈՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**